ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2026 թվականի N 95-Ա

«ԽՈԶՆԱՎԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎՈԼՈԴՅԱ ԶԱԽԱՐՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԻՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ ՊՆ ՀԶԿ Սյունիքի մարզի զինվորական կոմիսարի ծանուցագիրը և «Խոզնավարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2026 թվականի մարտի 12-ի գրությունը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. «Խոզնավարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վոլոդյա Զախարյանին 2026 թվականի մարտի 17-ից ապրիլի 10-ը ներառյալ ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից՝ վարժական հավաքին մասնակցելու նպատակով:

2. «Խոզնավարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Հարություն Անդրիյանին:

2026-03-16 09:08:43 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. մարտի 13